ՍՍՀՄ ԳԱ թղթ. անդամ, Ուկր. ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, Ուկր. ՍՍՀ ԳԱ փիլիսոփայության ինստիտուտի դիրեկտոր, ՍՍՀՄ փիլիսոփայական ընկերության փոխպրեզիդենտ, ՍՍՀՄ ՓԸ Ուկրաինական բաժանմունքի պրեզիդենտ, Ուկր. ՍՍՀ «Գիտելիք» ընկերության վարչության նախագահ, Ուկր. ՍՍՀ պետական մրցանակի դափնեկիր Վ. Ի. Շինկարուկը (ծն. 1928 թ.) զգալի վաստակ ունի մարքս-լենինյան փիլիսոփայության, մասնավորապես, իմացաբանության, մեթոդաբանության և փիլիսոփայության պատմության բնագավառներում։ Նա հետազոտել է դիալեկտիկայի, տրամաբանության և ճանաչողության տեսության միասնության պրոբլեմի պատմական ծագումը նոր ժամանակների փիլիսոփայության մեջ, Կանտի, Ֆիխտեի, Շելինգի մոտեցումն այդ հարցադրմանը փիլիսոփայական համակարգերում, դրա լուծման պատմականորեն առաջին փորձը Հեգելի փիլիսոփայության մեջ և այդ պրոբլեմի դիալեկտիկամատերիալիստական մշակումը Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Վ. Ի. Լենինի աշխատություններում։ Այդ հիման վրա ճշգրտել ու կոնկրետացրել է դիալեկտիկայի՝ որպես զարգացման ընդհանուր տեսության, դիալեկտիկական տրամաբանության և ճանաչողության դիալեկտիկամատերիալիստական տեսության համընկնման իրական կողմերի։ Նրա հետազոտությունների երկրորդ կարևոր ուղղությունը ա խարհայացքի բովանդակության, կատեգորիալ կառուցվածքի և պատմական տիպերի, փիլիսոփայության, գիտության և մշակույթի նկատմամբ նրա հարաբերության ու դրանցում ունեցած ֆունկցիաների համակարգային տեսական վերլուծությունն է։ Նրա մի շարք այլ աշխատություններ նվիրված են Ուկրաինական փիլիսոփայական մտքի պատմությանը, մասնավորապես, Գրիգորի Սկովորոդայի փիլիսոփայությանը։

Վ. Ի. Շինկարուկն ավելի քան 200 աշխատությունների հեղինակ է։ Նրա գրքերն են «Հեգելի տրամաբանությունը, դիալեկտիկան և ճանաչողության տեսությունը» (1954), «Ի. Կանտի ճանաչողության տեսությունը, տրամաբանությունը և դիալեկտիկան (Ի. Կանտը որպես գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր)» (1974), «Դիալեկտիկական մատերիալիստական աշխարհայացքի հումանիզմը» (1974), «Դիալեկտիկայի, տրամաբանության և ճանաչողության տեսության միասնությունը։ Դիալեկտիկական տրամաբանության ներածություն» (1977), «Նոր մարդու ձևավորման փիլիսոփայական պրոբլեմները» (1979), «Զախ հեգելականությունը։ Քննադատական վերլուծություն», (1983), «Գրիգորի Սկովորոդայի փիլիսոփայությունը» (1972) և այլ աշխատություններ։

Ներկայացվող հոդվածը հեղինակը գրել է հատկապես «Տարեգրքի» համար։